19.03.25 - 19.03.25
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ պատմության թանգարան (ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ)

Ս.թ. մարտի 19-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ պատմության թանգարանում (ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ) «Ի՞նչ ենք հասկանում՝ «արգելված գրականություն» ասելով» խորագրով բանախոսությամբ հանդես կգան գրականագետներ Հայկ Համբարձումյանը և Արքմենիկ Նիկողոսյանը։

Արգելված գրականություն եզրույթը վերաբերում է այն գրքերին, հոդվածներին, ստեղծագործություններին կամ գրական այլ նյութերի, որոնց շրջանառությունը որոշակի պատճառներով արգելվում և սահմանափակվում է հանրության համար: Արգելման պատճառներ կարող են լինել քաղաքական, կրոնական, սոցիալական կամ մշակութային իրողությունները։

Գրականության պատմության մեջ մի շարք հայտնի գործեր արգելվել են այն պատճառով, որ քննադատել են իշխանություններին, խախտել են հասարակական նորմերը կամ շոշափել են զգայուն թեմաներ, ինչպես, օրինակ, ռասիզմ, անհանդուրժողականություն և այլն։

Տարբեր ժամանակահատվածներում արգելվել են Չարլզ Դիքենսի, Ջեկ Լոնդոնի, Էռնեստ Հեմինգուեյի, Ալեքսանդր Սոլժինիցինի, Բորիս Պաստեռնակի, Ջորջ Օրուելի, Եղիշե Չարենցի, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի և այլոց երկերը, աշխատությունները։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am